ՀՈՒՇԱԳԻՐ

««Էրեբունի» բժշկական ակադեմիա» Հիմնադրամի և Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատություն «Ռուս-Հայկական (Սլավոնական համալսարանի» համալսարանի միջև, համատեղ գիտահետազոտական աշխատանքների և մասնագիտական աջակցություն իրականացնելու մասին

ՀՀ, ք. Երևան

22.10.2024թ.

««Էրեբունի» բժշկական ակադեմիա» Հիմնադրամը (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0087, Տիտոգրադյան փող., 133 շենք, էլ. հասցե՝ erebuniacademy.am, այսուհետ՝ Կողմ 1), ի դեմս ռեկտոր Արթուր Իկիլիկյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և **Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատություն «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանը** (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Երևան, Հովսեփ Էմինի փ. 123շ, էլ հասցե՝info@rau.am, այսուհետ՝ Կողմ 2), ի դեմս ռեկտոր Էդվարդ Մարտինի Սանդոյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը պայմանավորվում են մեկտեղել իրենց ջանքերը, միջոցներն ու փորձը և գործակցել հետևյալ ուղղություններով՝

1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում.

1.1. Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող, ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացման, մասնագիտական գրականության, մեթոդական ուղեցույցների, աշխատությունների, պարբերականների, գիտական հոդվածների հրատարակման, այլ նյութերի փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման և լուծման,

1.1.1. Գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման,

1.1.2. Ապահովել ««Էրեբունի» բժշկական ակադեմիա» Հիմնադրամի շրջանավարտների շարունակական կրթությունը՝ օրենքով սահմանված կարգով:

1.1.3. Գրադարանից ազատ օգտվելու իրավունք,

1.1.4. Համատեղ լաբորատոր աշխատանքների կազմակերպում,

1.1.5. Սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների, լաբորատոր և այլ միջոցների օգտագործման,

1.1.6. Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու,

1.1.7. Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով

2. Անցկացնել Համալսարանի ուսանողների ուսումնական, արտադրական, նախադիպլոմային և գիտաարտադրական պրակտիկաները՝ ուղեգրերում նշված ժամկետներում, համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում (կուրս, ուսանող, ղեկավար)

2.1. Կազմակերպության կողմից՝ ուսումնական բաժնից, պրակտիկայի ղեկավարման համար

նշանակել համապատասխան որակավորմամբ մասնագետ,

2.2. Ուսանողներին ծանոթացնել անվտանգության տեխնիկայի և Կազմակերպության կարգապահական կանոններին՝ ապահովելով Պրակտիկայի անցկացման անվտանգ պայմանները,

2.3. Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր Ուսանողին տալ բնութագիր

3. Հուշագրի դրույթներից բխող աշխատանքների բնույթի, ծավալի և այլ անհրաժեշտ գործողությունների հստակեցումը Կողմերը կկատարեն Հուշագրի շրջանակում առանձին փաստաթղթեր կազմելու և հաստատելու միջոցով:

4. Կողմերը պայմանավորվում են սույն հուշագրում նշված նպատակներին հասնելու համար գործադրել իրենց լավագույն ջանքերը, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով անհրաժեշտության դեպքում տեղեկատվության, գիտելիքի, փորձի, հմտությունների փոխանակմամբ, մասնագիտական հանձնախմբերի ստեղծմամբ, այլ անձանց և մարմինների հետ համագործակցությամբ:

5. Համաձայնագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Համաձայնագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի կողմից մյուս կողմին կանխավ տեղեկացնելով 1 (մեկ) ամիս առաջ:

6. Կողմերը ֆինանսական պարտավորվածություն չեն կրում:

7. Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի հաստատման պահից:

8. Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

9. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

10. Հուշագիրը կնքված է երկու հավասարազոր հայերեն օրինակից. յուրաքանչյուր Կողմին՝ մեկ օրինակ:

4. Կողմերի իրավաբանական հասցեները

ԿՈՂՄ 1	ԿՈՂՄ 2
««Էրեբունի» բժշկական ակադեմիա» Հիմնադրամը Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0087, Տիտոգրադյան փող., 133 շենք, ՀՎՀՀ՝ 00484449 Էլ. հասցե՝ erebuniacademy.am Ռեկտոր՝ Ա. Մկրտիչյան ______________	Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատություն «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան» Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0051, Հ. Էմինի 123 ՀՎՀՀ՝ 00053474 Էլ. հասցե՝ info@rau.am Ռեկտոր՝ Է. Սանդոյան ______________